

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</b>	<b>Մանածագործ</b>
<b>Դերը</b>	<p>Կազմակերպել և/կամ ղեկավարել մանվածքի արտադրության հետ առնչվող աշխատանքներ տեքստիլ ու մանածագործական ձեռնարկություններում, արտադրամասերում կամ դրանց առանձին ստորաբաժանումներում: Ապահովել տարբեր ստորաբաժանումների միջև սերտ համագործակցություն՝ ուղղված մանածագործական աշխատանքների արդյունավետ և որակյալ կազմակերպմանը՝ յուրաքանչյուր որոշարկված դեպքում հաշվի առնելով հիմնարկության ներքին հնարավորությունները, աշխատանքային պայմանները, տեխնիկական ու տեխնոլոգիական հագեցվածությունը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների մասնագիտական հատկանիշները: Վերահսկել մանածագործական բրիգադների ամենօրյա աշխատանքները, հերթափոխի գրաֆիկները, անվտանգության կանոնների և առողջապահական չափանիշների պահպանումը, հարկ եղած դեպքում հանդես գալ խորհրդատվությամբ:</p>
<b>Խնդիրների բնագավառ 1.</b>	<b>Աշխատանքների կազմակերպում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>ա/ մշակում է մանածագործական բրիգադի ընթացիկ աշխատանքային ծրագրեր,          բ/ նախապատրաստում և կազմակերպում է մանածագործական բրիգադի փաստացի աշխատանքը,          գ/ մշակում է աշխատանքային մեթոդների և ձևերի նորացմանն ու կատարելագործմանն ուղղորդված գործառնություններ.</p>
<b>Կատարման չափանիշները</b>	<p>ա/ ճիշտ են կազմված աշխատանքային ընթացիկ ծրագրերը,          բ/ ճիշտ է կազմակերպված մանածագործական բրիգադի առօրյա աշխատանքային գործընթացը,          գ/ համապատասխան հանձնարարականները</p>

	<p>ձևակերպված են հստակ և հասկանալի,  դ/ ճիշտ են բաշխված աշխատանքային ռեսուրսներն ու ժամանակը,  ե/ ճիշտ են ներկայացված և տեղին են կիրառվում աշխատանքային նորարարական մեթոդները,  զ/ աշխատանքն իրականացված է համաձայն նախապես ծրագրված պայմանների և ժամանակի.</p>
<b>Խնդիրների բնագավառ 2.</b>	<b>Աշխատանքային միջավայրի հսկողություն</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>ա/ հսկողություն է սահմանում աշխատանքների կազմակերպման մեթոդների և տեխնոլոգիաների նկատմամբ,  բ/ հաշվարկում և պլանավորում է որոշարկված քանակությամբ մանահումքի մշակման համար անհրաժեշտ աշխատանքային մեքենաները, սարքավորումներն ու գործիքներ, ինչպես նաև հարակից այլ նյութերի ձեռքբերման ծավալները,  գ/ հսկում է իրեն ենթակա աշխատակիցների աշխատանքային գործունեությունն ու կարգապահությունը,  դ/ վերահսկում է աշխատանքային պայմանների և աշխատատեղերի սանիտարահիգիենիկ նորմերը, մեքենա-սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,  ե/ վերահսկում է աշխատողների և նրանց կատարած աշխատանքի արդյունքները.</p>
<b>Գատարման չափանիշները</b>	<p>ա/ պահպանված են աշխատատեղերի սանիտարական նորմերը,  բ/ պահպանված են աշխատանքային կարգապահության նորմերը,  գ/ ձեռք են բերված անհրաժեշտ մեքենաները, սարքավորումները, աշխատանքային գործիքները և հարակից նյութերը,  դ/ ապահովված են աշխատանքային պայմանների հիգիենայի նորմերը,  ե/ ապահովված են աշխատանքային պայմանների և մեքենա - սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները.</p>
<b>Խնդիրների բնագավառ 3.</b>	<b>Աշխատանքային ռեսուրսների կառավարում</b>

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>ա/ կազմում և վերահսկում է աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը, բ/ կատարում է աշխատանքի բաժանում, գ/ կազմում է հաստիքների ցանկը, դ/ առաջարկում է բրիգադի աշխատակազմի խրախուսման միջոցառումներ, ե/ օժանդակում է աշխատակիցների վերապատրաստմանը, զ/ ջանում է ապահովել առողջ աշխատանքային միջավայր, է/ հանդես է գալիս աշխատանքայի կոնֆլիկտները հարթելու նախաձեռնությամբ.</p>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>ա/ ճիշտ է կազմված աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը, բ/ ճիշտ և արդարացի է կատարված աշխատանքի բաժանումը, գ/ հաստիքները և դրանց համապատասխան աշխատավարձերը ձևավորված են աշխատանքային օրենսդրության սահմաններում, դ/ աշխատանքային կոնֆլիկտները ստանում են ճիշտ լուծումներ.</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 4. Մանածագործական մեքենա - սարքավորումների անսարքությունների և թերությունների, ինչպես նաև դրանց պատճառների բացահայտում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>ա/ մանածագործական մեքենա - սարքավորումների մակնիշին և տեսակին համապատասխան՝ ուրվագծում է անսարքությունների հավանական պատճառները, բ/ յուրաքանչյուր բացահայտված անսարքության հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումներ, գ/ մատնանշում է յուրաքանչյուր անսարքության հիմնավոր պատճառը, դ/ մատնանշում է յուրաքանչյուր անսարքության վերացման միջոցներն ու միջոցառումները.</p>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>ա/ տիրապետում է մանածագործական տարբեր մակնիշի և տեսակի մեքենա - սարքավորումների աշխատանքի առանցքային յուրահատկություններին, բ/յուրաքանչյուր որոշակի դեպքում ճիշտ է առանձնացնում</p>

	<p>մեքենա- սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը,  գ/ ճիշտ է ախտորոշում անսարքության իրական պատճառները.</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 5. Մանածագործական մեքենա - սարքավորումների անսարք ու վնասված պահեստամասերի փոխարինում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>ա/ ձեռքով կամ համապատասխան գործիքների կիրառմամբ՝ շարքից դուրս եկած պահեստամասերի ապամոնտաժում և տարանջատում,  բ/ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը և ռեժիմները, նոր պահեստամասերի տեղադրում,  գ/ միջանկյալ չափումների և ստուգումների կատարում.</p>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>ա/ ճիշտ է կատարվում անսարք պահեստամասերի ապամոնտաժումը՝ պահպանելով դրանց համար սահմանված ռեժիմները,  բ/ պահեստամասերի ապամոնտաժումը կատարվում է՝ ճշտորեն պահպանելով աշխատանքների հաջորդականությունը,  գ/ պահեստամասերի ընտրության ժամանակ ճիշտ է պահպանվում դրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը,  դ/ ճիշտ են պահպանվում նոր պահեստամասերի տեղադրման աշխատանքների հաջորդականությունը և ռեժիմները,  ե/ ճիշտ են կատարվում նոր տեղադրված պահեստամասերի աշխատանքային պիտանելիության ստուգումները.</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 6. Մանածագործական մեքենա - սարքավորումների տեխնիկական շահագործում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>ա/ մանահումքը փխրեցնող մեքենայի տեխնիկական շահագործում,  բ/ մանահումքը գող մեքենայի տեխնիկական շահագործում,  գ/ մանայնությոը սանրող մեքենայի տեխնիկական շահագործում,  դ/ ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործում,</p>

	<p>ե/ հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործում,</p> <p>զ/ նախամանվածք և մանվածք արտադրող մեքենայի տեխնիկական շահագործում.</p>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>ա/ ճիշտ է շահագործում մանահումքը փխրեցնող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>բ/ ճիշտ է շահագործում մանահումքը զգող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>գ/ ճիշտ է շահագործում մանանյութը սանրող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>դ/ ճիշտ է շահագործում ժապավենաթել արտադրող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>ե/ ճիշտ է շահագործում հաստաթել արտադրող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>զ/ ճիշտ է շահագործում նախամանվածք արտադրող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>է/ ճիշտ է շահագործում մանվածք արտադրող մեքենան՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները.</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 7. Մանվածքային արտադրանքի թողարկում և դրա որակի հսկում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>ա/պահանջվող հաստությամբ ժապավենաթելի թողարկում,</p> <p>բ/պահանջվող հաստությամբ հաստաթելի (նախաթելի) թողարկում,</p> <p>գ/պահանջվող հաստությամբ մանվածքի (թելի) թողարկում,</p> <p>դ/ ժապավենաթելի որակի ստուգում և հսկում,</p> <p>ե/ հաստաթելի որակի ստուգում և հսկում,</p> <p>զ/ մանվածքի որակի ստուգում և հսկում.</p>

<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>ա/ ճիշտ է իրականացնում ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիական գործընթացը, բ/ ճիշտ է իրականացնում հաստաթելի արտադրության տեխնոլոգիական գործընթացը, գ/ ճիշտ է իրականացնում նախամանվածքից մանվածքի արտադրության տեխնոլոգիական գործընթացը, դ/ ճիշտ է իրականացնում տարբեր մանվածքային արտադրատեսակների որակի ստուգումը, ե / ճիշտ է իրականացնում տարբեր մանվածքային արտադրատեսակների որակի հսկումը.</p>
<p><b>Պատասխանատվությունը և բարդության աստիճանը</b></p>	
<p><b>Բարդության աստիճանը</b></p>	<p>Միջին</p>
<p><b>Պատասխանատվությունը</b></p>	<p>Մանածագործը պատասխանատու է՝ ա/ մանածագործական բրիգադի աշխատանքների ճիշտ կազմակերպման համար. բ/ մանածագործական արտադրամասում իրեն վստահված տեղամասում աշխատանքային միջավայրի պատշաճ հսկողության համար. գ/ մանածագործական բրիգադի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար. դ/ ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար. ե/ մանածագործական մեքենա - սարքավորումների մանր անսարքությունները ճիշտ ախտորոշելու համար. զ/ մեքենա - սարքավորումների տեխնոլոգիական ճիշտ շահագործման համար. է/ որակյալ մանվածք և/կամ մանվածքային այլ արտադրատեսակ թողարկելու համար:</p>
<p><b>Մասնագիտական գիտելիքները, կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը</b></p>	
<p><b>Լեզուները</b></p>	<p>ա/ հայերեն՝ գերազանց, բ/ օտար լեզու՝ լավ</p>
<p><b>Համակարգիչը</b></p>	<p>ա/ MS Word՝ լավ, բ/ Internet Explorer՝ բավարար.</p>
<p><b>Գիտելիքները</b></p>	<p>ա/ կառավարում, բ/ ծրագրավորում, գ/ հաշվառում, դ/ վերահսկում,</p>

	<p>ե/ աշխատակազմ և մարդկային ռեսուրսներ,  զ/ մաթեմատիկա,  է/ կրթություն և վերապատրաստում.</p>
<p><b>Կարողությունները և հմտությունները</b></p>	<p>ա/ գործարարության դրսևորում,  բ/ տարրական մենեջմենթի իմացություն,  գ/ մշտադիտարկման (մոնիթորինգի) իրականացում,  դ/ օրենսդրական դաշտի բավարար տիրապետում,  ե/ ուսուցում և սովորեցնելու ընդունակություն,  զ/ անկաշկանդվածություն,  է/ աշխատաժամանակի հաշվենկատ կառավարում,  ը/ թիմային աշխատանքի ղեկավարում,  թ/ աշխատակիցների հոգեբանական կերտվածքի ճիշտ  ընկալում,  ժ/ խորհրդատվության ցուցաբերում,  ի/ վարչարարություն,  լ/ նորարարական առաջարկությունների հստակ  ձևակերպում և իրականացում.</p>
<p><b>Վերաբերմունքը</b></p>	<p>պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող,  ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորն  ընկալող.</p>